Հավելված

ՀՀ Լոռու մարզի
Թումանյան համայնքի ավագանի
2023 թվականի փետրվարի 27-ի 9-Ա որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ «ՏԻՄ-ԽԱՂԱ» ԱՌՑԱՆՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքային համացանցային կայքում «ՏԻՄ-Խաղա» առցանց տեղեկատվական, ուսուցողական հարթակի տեղադրման և գործարկման մասին _____ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

_____ համայնքի ղեկավար՝ _____

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ «ՏԻՄ-ԽԱՂԱ» ԱՌՑԱՆՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

_____ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքային կայքում «ՏԻՄ-Խաղա» առցանց տեղեկատվական, ուսուցողական հարթակի տեղադրման և գործարկման մասին _____ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ _____ համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

_____ համայնքի ղեկավար՝ _____

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ «ՏԻՄ-ԽԱՂԱ» ԱՌՑԱՆՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

----------ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն **«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի՝**

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա: Իսկ **7-րդ կետի**

համաձայն՝ Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, հաշվի առնելով տվյալ համայնքի առանձնահատկությունները, առնվազն պետք է սահմանի.

1) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին բնակիչների իրազեկվածության ապահովման անհրաժեշտ պայմանները.

2) այն բավարար պայմաններն ու չափանիշները, որոնք անհրաժեշտ են գործնականում ապահովելու համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում՝ ապահովելով նաև համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժուն խմբերի մասնակցությունը:

Նույն օրենքի 37-րդ հոդվածի (Համայնքի ղեկավարի լիազորությունները տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում) 1-ին մասի համաձայն՝

1. Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության):

Բնակիչների մասնակցությունը համայնքում իրականացվող գործընթաց է, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում ՏԻՄ-երի որոշումների վրա:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունն իրականացվում է պասիվ և ակտիվ եղանակներով: Պասիվ եղանակներից են բնակիչների ծանուցումը, իրազեկումը և/կամ կրթումը: Իրազեկումը հանդիսանում է մասնակցության առաջին աստիճանը:

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից, ՄԱԶԾ «Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման գործընթացներում» ծրագրի շրջանակներում, զարգացված «ՏԻՄ-Խաղա» առցանց տեղեկատվական, ուսուցողական հարթակի տեղադրումը համայնքային կայքում և լայն տարածումը համայնքի բնակիչների շրջանում թույլ կտա հնարավորինս մեծ թվով բնակիչների իրազեկել ՏԻՄ-ի գործունեության մասին, որպեսզի նրանց մոտ ցանկություն առաջանա մասնակցել ՏԻՄ-ի որոշումների կայացման գործընթացներին և/կամ իրազեկ լինեն համայնքի կառավարման և զարգացման գործընթացներին: Մյուս կողմից, հավելվածի կիրառումը թույլ կտա կրթել բնակիչներին, որպեսզի նրանք առավել խելամտորեն վերաբերվեն ՏԻՄ-ի նախաձեռնություններին, կարողանան գնահատել համայնքային խնդիրների լուծման այլընտրանքների առավելություններն ու թերությունները և այլն:

«ՏԻՄ-Խաղա» առցանց խաղն ունի երկու մակարդակ՝ նախատեսված բնակիչների և ավագանիների համար: Այն հնարավորություն է տալիս ցանկացած բնակչի անցնել «Համայնքային բյուջե», «Համայնքային տարեկան աշխատանքային պլան» և «Համայնքային հնգամյա զարգացման ծրագիր» բաժիններով, ստուգել իր գիտելիքները այս ոլորտում, սովորել և հաջողությամբ անցնելու դեպքում ստանալ «Համայնքի ակտիվ բնակիչ» կամ «Համայնքի ավագանու անդամ» առցանց հավաստագիր:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև առկա ռեսուրսը (մշակված հարթակը)՝ որոշման նախագծով Թումանյան համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվում Թումանյանի համայնքային համացանցային կայքում «ՏԻՄ-Խաղա» առցանց տեղեկատվական, ուսուցողական հավելվածի տեղադրման և գործարկման մասին Թումանյան համայնքի ավագանու որոշման նախագիծը:

համայնքի ղեկավար՝